ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՐՏԱՔԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ (ՎԵՐԱՑՄԱՆ) ԺԱՄԱՆԱԿ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՅԱԲԵՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԵՎ ԱՅԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 22 հունվարի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ Ռ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ «Արտաքին սահմաններում ճգնաժամային իրավիճակների առաջացման եւ կարգավորման (վերացման)

ժամանակ օգնության ցուցաբերման հարցում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների սահմանապահ եւ այլ գերատեսչությունների փոխգործակցության կազմակերպման կանոնակարգի հաստատման մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 28.11.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա արձանագրությունն ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Արձանագրությունն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում՝ արտաքին սահմաններում ճգնաժամային իրավիճակների առաջացման եւ կարգավորման (վերացման) ժամանակ օգնության ցուցաբերման հարցում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների սահմանապահ եւ այլ գերատեսչությունների փոխգործակցության կազմակերպման հիմունքները եւ փոխգործակցության մեխանիզմը սահմանող Կանոնակարգի հաստատման նպատակով:

2. 2012 թվականի նոյեմբերի 7-ի դրությամբ խնդրո առարկա արձանագրությունն ուժի մեջ է Բելառուսի Հանրապետությունում (որն արձանագրությանը միացել է վերապահումով), Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում:

3. Արձանագրության բաղկացուցիչ եւ անբաժանելի մաս է կազմում հավելվածը, որով սահմանված է Կանոնակարգը:

4. Արձանագրությամբ եւ Կանոնակարգով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- նախապես սահմանել կազմավորումներ խմբավորման կազմում ներառելու համար՝ ճգնաժամային իրավիճակի կարգավորմանն առնչվող խնդիրներն իրականացնելու նպատակով,

- կազմավորել համապատասխան խմբավորումներ եւ ապահովել դրանք սպառազինությամբ եւ ռազմական տեխնիկայով, նյութական եւ տեխնիկական միջոցներով,
- անցկացնել անձնակազմի բարոյահոգեբանական նախապատրաստման ապահովմանն ուղղված աշխատանքներ ճգնաժամային իրավիճակների վերացման ժամանակ,
- ապահովել համատեղ միջոցառումների իրականացումն ու իրադրության կանխատեսման գործողությունների համակարգումը ճգնաժամային իրավիճակների կարգավորման գործընթացում,
- որոնել եւ ոչնչացնել ահաբեկչական խմբավորումներին եւ անօրինական զինված կազմավորումներին,
- կանխարգելել սահմանամերձ պետությունների քաղաքացիների չարտոնված զանգվածային ներթափանցումը, իրականացնել հատուկ սահմանապահ գործողություններ, համալիր օպերատիվ-որոնողական եւ կանխարգելիչ միջոցառումներ,
- կանխել պետական սահմանով պայթուցիկ նյութերի, սպառազինության, պայթուցիկ սարքերի, զենքի եւ զինամթերքի ապօրինի տեղափոխումը,
- մասնակցել ճգնաժամային իրավիճակի կարգավորման կարգը սահմանող փաստաթղթերի համատեղ մշակման գործընթացին, ծրագրերի մշակմանն ուղղված համատեղ պարապմունքներին եւ վարժանքներին, ինչպես նաեւ փոխանակվել համապատասխան տեղեկատվությամբ եւ փորձով,
- որպես ընդունող կողմ ստեղծել անհրաժեշտ պայմաններ անձնակազմի, տեխնիկայի, զենք-զինամթերքի, հատուկ միջոցների եւ ապահովման նյութերի, խմբավորման ընդունման եւ տեղաբաշխման, ինչպես նաեւ օդանավակայանի անհատույց տրամադրման, բազավորման կետերով, երկաթգծի ուղիներով, փոխադրամիջոցներով, փոստային եւ այլ կապի միջոցներով, սննդով, էլեկտրականությամբ, ջրով ապահովման համար, ինչպես նաեւ իրականացնել ծավալուն կոմունալ-կենցաղային եւ բժշկական սպասարկում,
- ապահովել կազմավորումների եւ նրանց բեռների անարգել տեղաշարժը դեպի նշանակման վայրեր,
- գրավոր ծանուցել իր պետական սահմանի հատման տեղի, ժամանակի ու կարգի մասին եւ ստեղծել անհրաժեշտ պայմաններ իր տարածքով նախանշված վայր շարժվող կամ տարանցվող համապատասխան կազմավորումների անարգել

եւ անհապրույց տեղաշարժի համար, ինչպես նաեւ ապահովել դրանց տեղավորումը եւ ենթակառուցվածքներից օգտվելը,

- իրականացվող միջոցառումների արդյունավետությունն ու օպերատիվությունը բարձրացնելու նպատակով ապահովել պետական սահմանի հատման ժամանակ ընթացակարգերի արագացված իրագործումը,
- կազմավորման սպառազինությունը եւ ռազմական տեխնիկան, նյութատեխնիկական ապահովման միջոցներն ազատել մաքսային վճարներից եւ այլ հարկումներից, ինչպես նաեւ խմբավորման ղեկավարության նույնականացման միջոցներով ապահովված ծառայողական փաստաթղթերը չենթարկել զննման,
- որպես ընդունող կողմ խմբավորման անձնակազմին վճարել փոխհատուցում, ինչպես նաեւ հատուցել անձնակազմի ընտանիքների անդամների ծախսերը՝ կապված վիրավորվելու, հաշմանդամության կամ մահվան հետ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ չափերով:

5. Արձանագրությամբ սահմանված են նաեւ կողմերի միջեւ խորհրդակցությունների անցկացման կարգը, միավորված շտաբի կազմավորման եւ գործունեության կարգը, համատեղ միջոցառումների ավարտման եւ վիճելի հարցերի լուծման կարգը:

6. Արձանագրությամբ սահմանված են նաեւ դրան միանալու, այն ուժի մեջ մտնելու, դրանից դուրս գալու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին ու 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ «Արտաքին սահմաններում ճգնաժամային իրավիճակների առաջացման եւ կարգավորման (վերացման) ժամանակ օգնության ցուցաբերման հարցում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների սահմանապահ եւ այլ գերատեսչությունների փոխգործակցության կազմակերպման կանոնակարգի հաստատման մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 հունվարի 2013 թվականի
ՍԴՈ-1068